ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ա.Ձ. Մարգարիտ Արծրունյան-ն ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
6	Ղեկավարի գրասենյակային բազկաթոռ Նշանակությունը և կառուցվածքը՝ նախատեսված ղեկավարի գրասենյակային աշխատանքի համար, էրգոնոմիկ կառուցվածքով, փափուկ նստատեղով և թիկնակով, բազկակալներով, բարձրության և թիկնակի թեքության կարգավորման հնարավորությամբ, պտտվող և անիվավոր բազկաթոռ: Նստատեղը և թիկնակը՝ անատոմիական կառուցվածքով, բարձր խտության առաձգական փափուկ լցանյութով, երեսպատված որակյալ արհեստական կաշվով (էկոկաշի) կամ բնական կաշվով, գույնը սև: Երեսպատումը՝ շփման, քերծվածքների և առօրյա մեխանիկական ազդեցությունների նկատմամբ դիմացկուն, հեշտ մաքրվող: Թիկնակը՝ մեջքի և գոտկատեղի բնական կորություններին համապատասխանող, գոտկային հատվածի հենարանով՝ երկարատև նստած աշխատանքի ընթացքում հարմարավետության ապահովման համար: Ճոճման և թեքության կարգավորման մեխանիզմը՝ բազմաֆունկցիոնալ, Multiblock, Synchro կամ համարժեք գործառութային հնարավորություններով, ճոճման և թիկնակի թեքության անկյունը մի քանի դիրքերում ֆիքսելու հնարավորությամբ: Բարձրության կարգավորման մեխանիզմը՝ գազային ամբարձիչով (Gas Lift), Class 4 դասի կամ համարժեք ամրության և բեռնունակության ցուցանիշներով, նստատեղի բարձրության սահուն կարգավորման հնարավորությամբ: Բազկակալները՝ երկու հատ, ամուր մետաղական, փայտե կամ պոլիմերային հիմքով, վերին հատվածները՝ փափուկ լցանյութով և արհեստական կամ բնական կաշվով երեսպատված, կամ բարձրությամբ և դիրքով կարգավորվող (3D/4D)՝ պոլիուրեթանային հենման մակերեսով: Հենահիմքը՝ հնգաթև, ուժեղացված մետաղական կամ քրոմապատ մետաղական կառուցվածքով, առնվազն 680 մմ տրամագծով, բազկաթոռի

	ծանրաբեռնվածության հավասարաչափ բաշխումն ու կայունությունն ապահովող։ Անիվները՝ առնվազն 5 հատ, 360° պտտվող, պոլիուրեթանային (PU) ծածկույթով կամ համարժեք պաշտպանիչ հատկություններով, հատակի մակերեսը քերծվածքներից և վնասվածքներից պաշտպանող, սահուն և նվազագույն աղմուկով տեղաշարժ ապահովող։ Պտտման հնարավորությունը՝ նստատեղի պտտում ուղղահայաց առանցքի շուրջ՝ 360°։ Թույլատրելի բեռնվածությունը՝ առնվազն 130 կգ։ Չափերը՝ • Բազկաթոռի ընդհանուր բարձրությունը՝ 1210 մմ։ • Նստատեղի բարձրությունը հատակից՝ 500 – 600 մմ (կարգավորվող գազլիֆտ մեխանիզմի շնորհիվ) ։ • Նստատեղի լայնությունը՝ 540 մմ ։ • Նստատեղի խորությունը՝ 510մմ ։ • Թիկնակի բարձրությունը՝740 մմ ։ • Բազկաթոռի ընդհանուր լայնությունը՝700մմ ։ Կառուցվածքի ամրությունը և կայունությունը՝ ամուր և հուսալի միացումներով, նախատեսված ամենօրյա գրասենյակային շահագործման համար, առանց կողմնակի ճռռոցների, մեխանիզմների խցանումների և կառուցվածքային դեֆորմացիաների։ Արտաքին տեսքը՝ հարթ և պատշաճ մշակված մակերեսներով, առանց ճաքերի, պատռվածքների, քերծվածքների, երեսպատման վնասվածքների և այլ տեսանելի թերությունների։ Ընդհանուր պահանջները՝ նոր, չօգտագործված, գործարանային արտադրության, հավաքման և շահագործման համար անհրաժեշտ բոլոր կցամասերով, ամրակներով և պարագաներով։ Մատակարարման պայմանները՝ ապրանքի մատակարարումը, բեռնաթափումը, հավաքումը (եթե ապրանքը ունի հավաքման կարիք) և տեղադրումը համապատասխան սենյակում կամ պահեստում, ինչպես նաև կարգաբերումները իրականացվում է Վաճառողի ուժերով և իր միջոցների հաշվին։ Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 365օր։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ա.Ձ. Մարգարիտ Արծրունյան в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
6	